ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ «ՀՈՂՄԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

10 սեպտեմբերի 2024 թվական

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

## Պայմանագիրն միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև «02» օգոստոսի 2024 թվականին կնքված «ՇՄՀՂՄԴ-ՄԱԱՊՁԲ-24/4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Ա/Ձ «Անդրանիկ Հարությունյան» հանդիսացող ֆիզիկական անձ՝ Ա. Հարությունյանի հարազատներից 07.09.2024 թվականին ստացվել է պետական վկայական մահվան մասին՝ ԲԱ898682, որից պարզ է դարձել, որ սույն թվականի սեպտեմբերի 3-ին նա մահացել է, քանի որ Ա/Ձ-ի մահվան, գիտակցության կորստի, գործունակության սահմանափակման դեպքերում նրա գործունեությունը դադարում է, ինչպես նաև Ա/Ձ-ի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը իրավահաջորդության սկզբունքով չի փոխանցվում նրա ժառանգներին հետևաբար անհնարին է դառնում վերը նշված պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման իրականացումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ՀՀ Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատվիրատուի ղեկավարը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Անդրանիկ